

ԱՄԱՆՈՐ

Հայաստանում ամենասիրված ու լայն ժողովրդայնություն վայելող տոներից մեկն է Ամանորը՝ Նոր Տարին: Ամանորը, ըստ էության, Նավասարդ բառի հայացումն է: Ամանոր՝ զենդերեն նշանակում է Նոր Տարի (նաև - նոր, սարեղա - տարի): Ամանորը մեզանում կոչվում է նաև Կաղանդ, որը հունական ծագում ունի եւ նշանակում է յուրաքանչյուր տարվա առաջին օրը: Հնագույն ժամանակներում հայերը Ամանորը տոնում էին Նավասարդ ամսին, դա համապատասխանում էր այսօրվա օգոստոսին: Մեծ տոնախմբությամբ էր նշվում տարվա առաջին օրը: Կազմակերպվում էին խրախմբանքներ, մասսայական խաղեր, ձիարշավներ, թատերախաղեր, տուներամարտեր: Աստվածներին մատուցում էին զոհաբերություններ: Այդ տոնախմբությանը մասնակցում էին նաև թագավորը, իշխանները, բարձրաստիճան պալատականները, զինվորականները: Մասսայական խաղերի, ձիարշավների ժամանակ, երիտասարդությունը ցուցադրում էր իր ճարպկությունն ու դիմացկունությունը: Տոնակատարության ընթացքում այգեպանները, հողի աշխատավորները սեղանների վրա դարսում էին իրենց առաջին պտուղները՝ ծիրանը, դեղձը, տանձը, խնձորը, խաղողը եւ տեսակ-տեսակ այլ բարիքներ, տանտիկինները՝ քաղցր շարոցը (սուջուխը), ալանին, ընկույզն ու բազմատեսակ չոր մրգերը: Նրանք առատորեն հյուրասիրում էին տոնակատարության մասնակիցներին, ուրախանում ու հպարտանում նրանց գովեստներից: Ձիարշավների ժամանակ երիտասարդներն օդ էին թռցնում բազմաթիվ աղավնիներ, բացվում էր հիասքանչ տեսարան, կապուտակ երկնքի վրա օդը թրատում էին բազմաթիվ թելավորներ, իսկ նրանց թելերի թափահարումից առաջացած ախորժալուր ձայները ուրախությամբ էին լցնում շրջապատը: Հայ դիցաբանության մեջ Ամանորի Աստվածը հանդիսանում էր պտղաբերություն պարգեւող՝ պտուղների, բերքի պահպանը եւ մարդկանց սնուցողը: Նա նաև հյուրընկալության խրախուսողն էր: Դեռեսս վաղ ժամանակներում հայերի համար հյուրասիրությունն ու հյուրընկալությունը սրբազան հասկացողություն էր, որը պահպանվում էր Աստծո կողմից: Հյուրասիրության հետ կապված մեզ են հասել բազմաթիվ ավանդություններ, ասացվածքներ, որոնք պահպանվել են մինչեւ օրս եւ ստացել են թելավոր խոսքի նշանակություն, այսպես օրինակ, «Տո՛նն իմ տունն է՛, տուն դուռ բացողին է», «Դռնաղն Աստծունն ա», «Պանիր հաց, սիրտը բաց», «Դռնաղն տան տիրոջ վարդն ա» եւ այլ ասացվածքներ: Հետագայում Տոնարի կազմության փոփոխության հետ Ամանորը, որպես հեթանոս Աստծո պաշտամունք, մոռացության մատնվեց, եւ հայերը սկսեցին Ամանորը՝ Նոր Տարին տոնել հունվար ամսին: Պահպանվեց իմաստը՝ Նոր Տարի, տարեմուտի առաջին օրը, տարին նորոգող տոնի հասկացողությունը, իսկ ժամկետը փոփոխության ենթարկվեց: Այժմ տարեմուտի տոնակատարությունը, ինչպես շատ ժողովուրդների մոտ կատարվում է հունվարի 1-ից մինչեւ 6-ը: Մեզանում այդ տոնը տարբեր անվանումներ ունի՝ Ամանոր, Կաղանդ, Կանատուր, Ամենաբեղ: Թերեւս տոնի հեթանոսական ծագումն է պատճառը, որ Ամանորը քրիստոնեական տեսակետից եկեղեցում որեւիցե ծիսակատարություն չունի, միայն այդ օրը, որպես Նոր Տարի, մատուցվում է Սուրբ Պատարագ: Նոր Տարին հնարավոր չէ պատկերացնել առանց տոնածառի: Եվրոպայում տոնածառը զարդարում են Ս. Ծննդյան տոնի նախօրեին, եւ ազգականներն ու բարեկամները միմյանց նվերներ են պատրաստում ու նվիրում: Հայաստանում տոնածառը զարդարում էին Նոր Տարվա նախօրեի գիշերը, իսկ Ս. Ծնունդը տոնում էին հունվարի 6-ին, որը պահպանվել է մինչեւ այժմ: Մեզանում ծառի պաշտամունքը գոյություն է ունեցել վաղ ժամանակներից: Դեռեսս հեթանոսական ժամանակաշրջանից պաշտամունքի առարկա են եղել բնությունը, անտառները, ծառերը: Գերեզմանատներում տնկում էին գեղեցիկ,

հազվագյուտ ծառեր ու ծաղիկներ, որովհետեւ հավատում էին հոգու անմահությանը, որ մեռածի հոգին շրջում է բնության գրկում եւ բնակվում է ծառերի ստափյունի, ծաղիկների նազանքի, զեփյուռի ու քիթեռնիկների թելիկների նրբին տրոփյունի մեջ: Բնության պաշտամունքի խորհրդանիշ են եղել սոսին, ուռենին, բարդենին: Հայաստանում ծառը համարվել է նաև ընտանիքի, գերդաստանի հավերժության խորհրդանիշ: Աստվածաշնչում նույնպես հիշատակվում է «Կենաց ծառը» կամ «Իմաստության ծառը»: Այսօր էլ հայ ընտանիքներում սովորություն կա գերդաստանի պատկերը տալ ծառի ձեւով, իսկ նրա մոտակա ու հեռակա ճյուղերի միջոցով արտահայտել ազգակցական կապերը: Շատ հավանական է, որ ծառի պաշտամունքը հայկական որոշ տոների ժամանակ, անմիջականորեն առնչվել է կենտրոնացել է Նոր Տարվա տոնածառի մեջ: Ծառի պաշտամունքը մեզանում արտահայտվել է նաև որոշակի տոնակատարությամբ, որը կոչվել է ծաղկազարդ՝ որպես զարմանալի օրվա, բնության զարթոնքի պաշտամունքի տոն: Ծաղկազարդի արմատները սնվել են հեթանոսական շրջանի հին սովորություններից, որի նախնական իմաստն այսօր մոռացության է մատնվել, ստացել է քրիստոնեական նշանակություն եւ պահպանվել է տոնածառի, ծաղկազարդ տոնի, խաղողօրհնների խորհրդապաշտական ծիսակատարություններում: Այդ տոնակատարություններն անմիջականորեն կապված են հայ իրականության հետ, հայկական երեւոյթ են: Սակայն բոլոր ժողովուրդների մոտ կան կենցաղային, բանահյուսական, ծիսական եւ այլ սովորությունների ընդհանրություններ, այդ հանգամանքի արտահայտություններից է նաև եղենին, որի պաշտամունքը իր տարբեր դրսևորումներով պահպանվել է աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների մոտ: Նոր Տարվա խորհրդանիշն է նաև Ձմեռ Պապին, «Կաղանդ Պապան» կամ «Մենծ Պապուկը»: Եվրոպայում Ձմեռ Պապիկին անվանում են «Պապա-Նոյել» կամ «Սանթա Բուլո», իսկ Ռուսաստանում «Դեղ Մորոզ»: «Կաղանդ Պապուկի» հասկացությունը Հայաստանում կրկին առնչվում է հնագույն ժամանակների հետ եւ հայկական երեւոյթ է: Դեռեսս վաղ շրջանում դիմակներով հանդես գալը, երեխաներին զվարճացնելն ու նրանց նվերներով ուրախացնելը նշանակվողվում էր առանձին տոնակատարությամբ՝ Բարեկենդանի խրախմբանքներով: Մենծ Պապուկի տոնն անվանվում էր Ս. Պարթևի օր է երեխաների ամենասիրված տոնախմբություններից մեկն էր: Նշվում էր Ս. Սարգսի տոնին հաջորդող օրերից մեկի ժամանակ: Ամբողջ գերդաստանը տանն էր անցկացնում, սեղանը լիքն էր լինում տեսակ-տեսակ կերակուրներով: Երբ խրախմբանքը իր գագաթնակետին էր հասնում, ընտանիքի մեծը, գաղտնի դուրս էր գալիս եւ որոշ ժամանակ անց ներս էր մտնում գլխին դրված սրածայր «բլուզ», ձեռքին մեծ զավազան, դեմքին բրդից սարքված բեղեր ու մորուս, իսկ կռնակին ոչխարի մորթի եւ մեծ տոպրակ՝ մեջը երեխաների համար նվերներ՝ խաղալիքներ, քաղցրավենիք: Նրա երեւալը մեծ ուրախություն էր պատճառում բոլորին, անշուշտ, մասնավորապես, մանուկներին: Սկսվում էին կատակները, ուրախությունները, որոնք ուղեկցվում էին երգ ու պարով: Վերջապես Մենծ Պապուկը իր տոպրակից հանում էր նվերները, բաժանում երեխաներին, իսկ մեծահասակներին հրանցնում մի - մի բաժակ անուշահամ կարմիր գինի՝ ասելով «Եկավ Մենծ Պապուկը, հազար բարով Բարեկենդանը»: Եվ այդ օրվանից՝ Սահակ Պարթևի տոնից անմիջապես հետո սկսվում էին Բարեկենդանի խրախմբանքները: Այսպիսով, Մենծ Պապուկի նախնական իմաստը մոռացության է մատնվել, ինչ-որ չափով փոխվել է նաև նրա հանդես գալու ժամանակը եւ կապվել Ամանորի տոնակատարությունների հետ: Այժմ մեզանում Նոր Տարին, ինչպես աշխարհի շատ ժողովուրդների մոտ, առանց Ձմեռ Պապի հնարավոր չէ պատկերացնել:

Հատկանշականն այն է, որ յուրաքանչյուր տարիք Հայաստանում ունի իր տոնն ու դրան համապատասխան արտահայտչամիջոցները՝ իր որոշակի խորհրդանիշը. երեխաների հետ կապվում էր եւ այսօր էլ նույն նշանակությամբ

է հանդես գալիս Չմեռ Պապին, իսկ համբարձման տոնակատարությունն ու վիճակ հանելու սովորությունը, նաև Ս. Սարգսի տոնը անմիջականորեն առնչվում են երիտասարդ աղջիկների՝ նորահարսերի հետ, ծաղկազարդը, Կարմիր-կանաչ կիրակին, Բարեկենդանն առավելապես վերաբերում է երիտասարդներին:

Ավելի ուշ, Հայաստանում Նոր Տարին սկսեցին նշել տարբեր ճանապարհով օրվա գիշերվա ժամը 12-ին, առատ սեղանի, խմիչքեղենի, ուրախ ժամանցի, երգ ու պարի, երաժշտության ուղեկցությամբ: Այդ սովորությունը պահպանվել է մինչև օրս. հին ավանդության համաձայն ինչպես անց են կացնում Նոր Տարին, ուրախ, թե տխուր, այդպես էլ կշարունակվի ամբողջ տարվա ընթացքում: Դա մշտապես եղել է ուրախության, առատության տոն, միաժամանակ Նոր Տարին դարձել է անցած տարվա կատարվածի, հանրագումարի ու հաշվետվության օր: Նոր Տարին դիմավորելու համար մի քանի օր առաջ հայ ընտանիքներում սկսվում են ամանօրյա պատրաստությունները: Ամենակարևորը հաց թխելու գործն է, որը կատարում են ընտանիքի տարեց կանայք: Նրանք մեծ տաշտակի մեջ խմոր են հունցում՝ հայկական խնկաբույր լավաշ թխելու համար, իսկ տան երիտասարդ աղջիկներն ու հարսերը օգնում են նրանց: Խմորը շատ պարզ է, սակայն աշխատատար է, պահանջում է հմտություն և ուժ: Անհրաժեշտ է լավ հունցել, պահպանել հասունության ճիշտ ժամանակն ու ճարտար ձեռքերով գրտնակել:

Օհական եւ Դաւանական Տարբերութիւններ Հայ Եկեղեցու Եւ այլ եկեղեցիների միջեւ

Հարց.- Ի՞նչ հիմնական տարբերութիւններ կան Հայ Առաքելական Եկեղեցու եւ միւս եկեղեցիների միջեւ:

Պատասխան.- Այս հարցը քննելուց առաջ օգտակար կլինի ծանօթանալ որոշ պատմական տեղեկութիւնների հետ.

Ա. Հայ Եկեղեցին Առաքելական, Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու մի հարազատ ճիւղն է: Քրիստոնէայ բոլոր եկեղեցիները մինչեւ Քաղկեդոնի ժողովը (451 թ.) մէկ էին: Բոլոր եկեղեցիները միեւնոյն դաւանանքն ու վարդապետութիւնները ունէին եւ միեւնոյն եկեղեցու տարբեր մասեր էին: Ամէն մէկը կարող էր գնալ ուրիշ ազգերի եկեղեցի եւ հաղորդութիւն ընդունել, քանի որ միեւնոյն դաւանանքն ունէին, եւ տարբերութիւնն այն էր, որ տարբեր լեզուներով էին խօսում:

451 թ.-ից յետոյ եկեղեցիները բաժանուեցին: Հայերը չընդունեցին նրա որոշումները, որ Յիսուսի համար «երկու բնութիւն եւ երկու կամք» էր դաւանում: Մինչ առաջին երեք Տիեզերական ժողովներում ընդունուած բանաձեւն էր՝ « Մի բնութիւն Բանին մարմնացելոյ»: Այս երեք ժողովներն են որոշել դաւանութեան հիմնական կէտերը Ս. Երրորդութեան, մարդեղութեան մասին, փրկչական խորհուրդները եւ Հաւատամքը:

Բ. Քրիստոնէական Եկեղեցին այսօր ներկայացնում է Հին եւ Նոր Եկեղեցիները: Հին Եկեղեցիները բաժանուած են երկու մասի՝ Արեւմտեան Եկեղեցիներ եւ Արեւելեան Եկեղեցիներ: Արեւմտեան Եկեղեցին հռոմէական Կաթողիկէ Եկեղեցին է: Արեւելեան Եկեղեցին իր հերթին դարձեալ բաժանուած է երկու մասի՝ Արեւելեան Օրթոդոքս (Ուղղափառ) քաղկեդոնական Եկեղեցիներ եւ Արեւելեան Ուղղափառ ոչ քաղկեդոնիկ Եկեղեցիներ: Առաջին խմբի մէջ մտնում են յոյն, ռուս, վրաց եւ այլ Եկեղեցիներ, իսկ երկրորդի մէջ՝ հայ, ասորական, դպտական, եթովպիական եւ այլ Եկեղեցիներ: Քաղկեդոնի «միութիւնը» երկար չտևեց: ԺԱ դարում Պապը Համգանակի Սուրբ Հոգուն վերաբերող մասում աւելացրեց «յորդոյ» բառը (Բխումն ի Հօրէ եւ յորդոյ): Այդ «ողբերգական» բառն էլ դարձաւ վէճերի ու բաժանման պատճառը: Այս բաժանումից

յետոյ արեւելեան յոյն եկեղեցին իրեն անուանեց «Յոյն Օրթոդոքս (Ուղղափառ) Եկեղեցի», իսկ արեւմտեան կամ լատին Եկեղեցին՝ կաթողիկէ (ընդհանրական) Եկեղեցի:

ԺՁ դարում Հռոմի Եկեղեցուն ծաւալուեց բարենորոգչական շարժում (Լիւթեր, Կալուին եւ այլն), որի հետեւանքն եղաւ ընդհանուր Բողոքական Եկեղեցու առաջացումը՝ իր բազմաթիւ ու բազմազան ճիւղաւորումներով:

Գ. Հռոմի Եկեղեցու գլուխը համարում է Հռոմի Պապը, որի խօսքը համարում է անսխալական՝ դաւաքանական եւ այլ կարգերում: Պապը ընտրում է կարդինալների կողմից՝ կարդինալների միջից: Յոյն Ուղղափառ Եկեղեցու պատմական Աթոռը համարում է Կ. Պոլսի Պատրիարքութիւնը, որի գահակալը կոչուած է «Տիեզերական Պատրիարք»: Հայ Եկեղեցու գլուխն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայ Եկեղեցին Կաթողիկոսին անսխալական չի հռչակում, այլ անսխալականութիւնը դիտում է Եկեղեցու ամբողջութիւնը ներկայացնող Տիեզերական ժողովի մէջ: Կաթողիկոսը ընտրում է Եպիսկոպոսների միջից, ձեռնադրում է եւ օծում: Կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման կարգը բնորոշ է միայն Հայ Եկեղեցուն, մինչ միւս Եկեղեցիներում «Եկեղեցու գլուխը» միայն ընտրում է, ձեռնադրութիւն եւ օծում չեն կատարում: Հայերի մէջ կան նաեւ կաթողիկէ դաւանանք ունեցող հայեր (Հայաստանում բնակւող հայ կաթողիկէներին ժողովուրդը յանախ կոչում է «Ֆրանկ» անունով): Կաթողիկէ հայ Եկեղեցու գլուխն է ընտրովի Պատրիարքը: Արեւելեան Եկեղեցուն քահանաները պէտք է ամուսնացած լինեն: Հռոմի Եկեղեցուն քահանաները չեն ամուսնանում, կուսակոսն են:

Դ. բողոքական Եկեղեցին չունի նուիրապետական կարգ, հետեւաբար չկայ նաեւ «Բողոքական Եկեղեցու գլուխ» հասկացութիւն: Բողոքական եւ Կաթողիկէ Եկեղեցիների միջին դիրքում է Անգլիական Եկեղեցին, որն առաջացել է ԺՁ դարում՝ բողոքական շարժման հետեւանքով: Ի տարբերութիւն միւս բողոքական Եկեղեցիների, Անգլիական Եկեղեցին ունի նուիրապետական կարգ եւ ընդունում է Հին Եկեղեցիների կողմից ընդունուած որոշ դաւաքանական սկզբունքներ (Նիկիայի «հաւատամքը», եօթը խորհուրդները եւ այլն):

Ե. Յոյն Ուղղափառ (կամ պատմական Բիւզանդական) Եկեղեցին ընդունում է միայն առաջին եօթը Տիեզերական ժողովները, Հայ Եկեղեցին՝ միայն առաջին երեքը (Նիկիայի 325 թ., Կոնստանդնուպոլսի՝ 382 թ. եւ Եփեսոսի՝ 431 թ.): Միւս ժողովներին (Քաղկեդոն 451 թ., Կոնստանդնուպոլսի Բ՝ 553 թ., Կոնստանդնուպոլսի Գ՝ 681 թ., եւ Նիկիայի Բ՝ 767 թ.) Հայ Եկեղեցին տիեզերականութեան ուժ եւ հեղինակականութիւն չի տալիս:

Ձ. Հայ Եկեղեցին ընդունում եւ հետեւում է հետեւեալ կանոնին.

«Միութիւն ազատութիւն եւ	ի սէր	կարեւորս, յերկրայականս յամենայնի»,
--------------------------------	--------------	---

որ թարգմանում է՝ միութիւն կարեւոր հարցերում, երկրորդականներում՝ ազատութիւն, իսկ ամէն ինչում՝ սէր:

Ե. Քրիստոսի բոլոր ճշմարիտ եւ ուղղափառ եկեղեցիները իրենց անդամներին ցոյց են տալիս ճշմարտութեան ճամփան եւ ամենքն էլ Յիսուսի Աւետարանի վրայ են հիմնուած: Այս է «ամէն բանում սէր» սկզբունքը: Իսկ ինչ վերաբերում է այն նորահնար կոչերին, թէ՛ մեր եկեղեցուց դուրս չիք փրկութիւն, մերժելի են ու անընդունելի, որ եկեղեցու կողմից էլ որ հռչակուած լինի: Այսինքն՝ այստեղ բացակայում է «ամէն բանում սէր» սկզբունքը, եւ հետեւաբար քրիստոնէական չեն:

Ը. Հայ Եկեղեցին հիմնել են Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքելները եւ ըստ այդմ նրա անունն է «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի»: Միայն ռուսներն են Հայաստանեայց Եկեղեցուն կոչում «Հայ Գրիգորեան Եկեղեցի» անունով, նշելով

Ս. Գրիգոր Լուսաւորչին, այսինքն՝ Հայ Եկեղեցու ծագումը դնելով 301 թ.-ին, մինչդեռ Հայ Եկեղեցին Առաքելադիր է, իսկ Ս. Լուսաւորչի օրօք մենք ամբողջ ազգով պետականօրէն ընդունեցինք քրիստոնէութիւնը եւ այդ ժամանակ էլ ծնուեցինք Ս. Աւետարանի խօսքով, իսկ Եկեղեցին Հայաստանում սկիզբ էր առել դեռեւս առաքելական շրջանից: Յիշենք Աբգարի, Սանատրուկի, Սանդուխտ կոյսի եւ այլոց պատմութիւնները: Հայ Եկեղեցին սրբացնելով այդ աւանդութիւնները, ընդունում է նրանց ճշմարտացիութիւնը: Ուղղափառները չեն ընդունում մեր Եկեղեցու առաքելական ծագումը եւ մինչ հիմա ջանում են ապացուցել վերոյիշեալ անձերի ոչ պատմական լինելը: Բայց անհնար է, որ այդ բանակի մէջ իրենց «ուրոյն» տեղն ունեն մաւե հայ պատմաբանները, հայ կաթողիկոսները ոմանք եւ այլն: Հօգտես ինչու, ճշմարիտ է համարում Հռոմի Եկեղեցու առաքելադիր լինելու աւանդութիւնը, մինչ Հայ Եկեղեցու համար այն համարում է ոչ ճշմարիտ, չնայած որ պատմագրական տեղեկութիւնների շատութեամբ ու ստուգութեամբ Հայ Եկեղեցին չի զիջում Հռոմի Եկեղեցուն:

Թ. Հայ Եկեղեցին լինելով Ընդհանուր Քրիստոնէական Եկեղեցու մէկ անդամը, իր տօնացոյցի մէջ ընդգրկում է մաւե ազգութեամբ ոչ հայ սրբերի: Տօնացոյցի մէջ ընդգրկուած են հիմնականում ԱժԵ դարերի սրբերը, որոնց վարքը արժանագրուած է «Յասնաւուրքում»:

Հայ Եկեղեցու հայազգի տօնելի սուրբերն են՝ Սանդուխտ կոյս, Ոսկեանք, Սուքիասեանք, Հռոմիսիմեաց կոյսեր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ թագաւոր, Արիստակէս եւ Վրթանէս, Ներսէս Մեծ, Սահակ ու Մեսրոպ եւ նրանց թարգմանիչ աշակերտները, Վարդանանք, Վահան Գողթնացի, Յովհաննէս Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի եւ Մովսէս Տաթեւացի:

Օտար Եկեղեցիներում հայազգի սուրբերից նշում են Ս. Գրիգոր Լուսաւորիչի յիշատակը:

Բացի սուրբերից հայոց մէջ եղել են մաւե բազմաթիւ վկաներ (նրանք, ովքեր նահատակուել են Յիսուսի անուան համար՝ վկայելով իրենց հաւատարմութիւնը Աւետարանին եւ Քրիստոսին): Բազմաթիւ աղբիւրներից եւ ձեռագրերից Մանանդեանն ու Աճառեանը հաւաքել են ԺԲ-ԺՃ դարերի շուրջ 150 վկաների մասին տեղեկութիւններ: Առաւել յայտնի վկաներից են Չաքարիա կաթողիկոս Աղթամարցիին եւ մեծն Սայեաթ - Նովան: Ինչ խօսք, որ հիմա, այդ ցանկը կարելի է աւելացնել վերջին կարմիր ժամանակների բազմաթիւ նորանոր անուններով:

Ժ. Նոր Եկեղեցու ճիւղերից շատերի մօտ այնպիսի յաւակնութիւն կայ, թէ իրենց աղօթքի պաշտամունքի ձեւերը համաձայն են առաքելական դարի պարզութեանը: Սա ոչ թէ յաւակնութիւն է, այլ՝ ինքնախաբէութիւն: Նոր Եկեղեցու եւ ոչ մի ճիւղ իր պաշտամունքային ձեւով նման չէ առաքելական դարի քրիստոնէականների պաշտամունքի ձեւերին:

Քրիստոնէական կրօնը Աստուծոյ բացառիկ յայտնութիւնն ու միջամտութիւնն է պատմութեան եւ նարդկային կեանքի մէջ: Քրիստոնէական սկզբնական շրջանում ամեն ազգ իրեն յատուկ ձեւով եւ ոգով կազմեց ու դասաւորեց իր ծեսը: Հայ Եկեղեցու ծեսը Ընդհանուր Եկեղեցու ծեսերի մէջ ինքնայատուկ է եւ շեշտուած է իր ազգային նկարագրով ու արտայայտութեամբ: Հայ Եկեղեցու ծեսը ծնունդ առաւ եւ կազմաւորուեց գրեթէ զիւտից յետոյ եւ ապա Աստուածաշնչի թարգմանութեամբ: Այստեղից սկսած Հայ Եկեղեցին թէ՛ իր վարդապետական ըմբռնումով եւ թէ՛ իր իւրայատուկ ծեսով, ազգային որոյն դրոշմ ստացաւ եւ ազգայնացաւ:

Բաւականին շատ են ոչ էական, երկրորդական տարբերութիւնները թուարկած բոլոր Եկեղեցիների միջեւ, որոնք հիմնականում ծիսական բնոյթ են կրում: Այսպէս.

- Հայերը եւ կաթողիկոսները նոյն ձեւով են խաչակնքում՝ ձախից

աջ, իսկ ուղղափառները՝ աջից ձախ:
- Ասորիները մէկ մատով են խաչակնքում, իսկ միւս ազգերը՝ երեք մատը սեղմած:
- Բողոքական յարանուանութիւնները չեն խաչակնքում ընդհանրապէս եւ այլն:

ԺԱ. Այժմ մի քանի խօսք այն տարբերութիւնների մասին, որոնք միշտ հարցեր եւ վէճեր են առաջացնում տարբեր Եկեղեցիների պատկանող հաւատացեալների միջեւ:

Ինչպէս նշեցինք, Հայ Եկեղեցու եւ կաթողիկոս ու ուղղափառ Եկեղեցիների միջեւ հիմնական անջրպետը Քաղկեդոնն է, որոշումներով ու դրանցից բխող հետեւութիւններով:

Մնացած դաւանաբանական խնդիրներից կարելի է առանձնացնել՝

- Քաւարանի հարցը,
- Պատկերների հարցը,
- Աստուածամօր անարատ յղութեան հարցը,
- Ս. Հօգու բխման հարցը:

Բողոքական Եկեղեցու հետ ունեցած խնդիրներից կարելի է առանձնացնել՝

- Սուրբերի բարեխօսութեան հարցը,
- Ննջեցեալների համար հոգեհանգիստ կատարելու հարցը,
- Յիսուսի «եղբայրների» հարցը,
- Մանկամկրտութեան հարցը,
- Մատաղի հարցը,
- Վերստին ծնունդի եւ Ս. Հոգու պարգէների առնչութիւնը:

Հարց.- Ի՞նչ է քաւարանը:

Պատասխան.- Համաձայն կաթողիկոսների քաւարանը մի մասնաւոր տեղ է, ուր մահուանից յետոյ հոգիները գնում են սրբուելու, որտեղ էլ մեղքերից ազատուելով միանում են փրկուած հոգիներին: Հայ Եկեղեցին չի ընդունում նման գաղափարը եւ մերժում է այն:

Հայաստանեայց Եկեղեցին ընդունում է, որ

**աստ շնորհքն է,
անդ՝ փառքն,
աստ մեղքն է, անդ՝ պատիժ:**

Հոգին այնտեղ չի կարող ապաշխարել եւ քաւել մեղքերը, քանի որ ապաշխարութեան ժամանակը այս կեանքն է, ինչպէս որ ասում է Պօղոս առաքելը. «Հիմա է ընդունելու ժամանակը եւ հիմա է փրկութեան օրը» (Բ Կորնթ., Զ, 2, Եսայի ԽԹ, 8):

Մի դիտողութիւն այդ համարի «ժամանակ» բառի մասին. հին յունարէնում (Նոր Կտակարանի լեզուն) կայ երկու բառ՝ «ժամանակ»՝ իմաստով՝ «քրոնոս» եւ «կայրոս»: Առաջինը նշանակում է ժամանակի ֆիզիկական ընթացքը: Երկրորդը՝ ժամանակի էութիւնը, իմաստը, բովանդակութիւնը: Այսպէս՝ օրացոյցը կամ ժամացոյցը ցոյց են տալիս «քրոնոսը»: Բայց Քրիստոսի աշխարհում սկսուեց մի նոր ժամանակ («կայրոս» ու ոչ թէ՛ քրոնոս»)՝ նոր բովանդակութեամբ եւ իմաստով: Պօղոսն օգտագործել է այս համարում «ժամանակ» բառի համար յունարէն «կայրոս» բառը: Հետեւաբար, ընդունելու եւ փրկուելու ժամանակը հիմա է՝ Քրիստոսից յետոյ եւ Քրիստոսով աշխարհի բերած ժամանակում: Այդ ժամանակը միայն «ֆիզիկական» ժամանակ չէ, որը զալիս է ու գնում, այլ էութեամբ իւրայատուկ ժամանակ է, երբ մարդ կարող է իր կեանքն իմաստաւորել, հասկանալ Աստուածային արարչութեան իմաստն ու Քրիստոսի փրկարար խորհուրդը: Ամեն մարդու համար իր կեանքը ընդգրկուած է այդ

«Ժամանակի» մեջ եւ այդ «Ժամանակը» աւարտում է մարդու համար այս կեանքից հեռանալուց յետոյ: Այդ «Ժամանակի» իրայատուկ լինելն իսկ բացառում է քաւարանի գոյութիւնը:

Հարց.- Ինչո՞վ է հիմնաւորում քաւարանի գոյութիւնը Հռոմի Եկեղեցին:

Պատասխան.- Հռոմի Եկեղեցին որպէս քաւարանի ապացոյց բերում է Ս. Գրքի մի քանի համարներ՝ Սաղմոս 2Ե, 13, Մատթ. Ե, 26, Մատթ. ԺԲ 32 եւ այլն:

Սաղմոս 2Ե, 13.- «Որովհետեւ մեծ է քո ողորմութիւնը ինձ վրայ եւ դու փրկեցիր իմ անձը ներքեւի դժոխքից»:

«Եթէ կայ ներքեւի դժոխք, ապա ուրեմն եւ կայ վերին դժոխք, որն էլ քաւարան է», - եզրակացնում են կաթողիկոսները: Ներքին եւ վերին դժոխքները, որ յիշում է Դաւիթը, չարչարանքների չափն են բնորոշում եւ տեղի իմաստ չունեն: Յայտնի է, որ Հիմ Կտակարանում բազում վկայութիւններ կան, ուր «դժոխք» բառն օգտագործուած է գերեզմանի իմաստով (Ծննդ., ԼԷ, 35, ԽԲ, 33, Գ Թագ., Բ, 9 եւ այլն) եւ ամենեւին ոչ «քաւարանի» իմաստով:

Տաքեւացու եւ ուրիշների մօտ հանդիպում են հետեւեալ եզրակացութեան.

- Համաձայն Ս. Գրքի, Յիսուսի երկրորդ գալուստի ժամանակը լինելու է հատուցման ժամանակը, մինչդէռ «քաւարանի» սկզբունքի համաձայն հատուցումը լինում է մինչ երկրորդ գալուստը եւ այն էլ ամէն օր:
- Քաւարանը մարդկանց մեղք գործելու ազատութեան է տանում, որը հակառակ է Յիսուսի Աւետարանին:
- Մեղքից ազատում ենք խոստումնաբեանք եւ հաւատով մաքրում Յիսուսի թափած արեան քաւարար ներգործութեանը, այլ ոչ թէ քաւարանի կրակով:
- Յիսուսի տուած իշխանութեան համաձայն, «ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած կլինի երկնքում եւ ինչ որ երկրի վրայ արձակէք, երկնքում էլ արձակուած կլինի», մինչդէռ քաւարանի սկզբունքը բացառում է այդ իշխանութեան գործադրութիւնը:

Մատթ., Ե, 26 - «Ճշմարիտ եմ ասում քեզ, դուրս չես գալ այդտեղից, մինչեւ որ չվճարես վերջին նաքարակիտը»:

Այստեղից էլ եզրակացնում են, որ «բանտում. նաքարակիտ վճարելու հնարաւորութիւն կայ, որն էլ քաւարանի սկզբունքն է: Արդէն խօսել ենք Ս. Գրքում «մինչեւ» բառի գործածութեան մասին: Երբ Յիսուս ասում է աշակերտներին, թէ մինչեւ աշխարհի վերջը ձեզ հետ եմ, ամենեւին չի նշանակում, որ աշխարհի վերջից յետոյ Յիսուս մեզ հետ չէ: Այդպէս էլ այստեղ. «մինչեւ» բառը չի նշանակում, թէ «բանտում» վճարելուց յետոյ դուրս կգաս այնտեղից: Եթէ «Բանտը» դժոխքն է, ապա ուրեմն, անհնար է, որ այնտեղից մարդ ի վիճակի լինի վճարելու: Նամանաւանդ որ բանտում ոչ մէկը կարողութիւն չունի նաքարակիտ տալու (տես Մատթ., ԻԵ, 8-ը՝ Տասը կոյսերի առակը): Հետեւաբար այդ պատմութիւնից կարելի է եզրակացնել, որ մահուանից յետոյ, ընդհակառակը, մեղաւորների համար փրկութիւն այլեւս չկայ, եւ նրանց սպասում է դատաստանը, որից ազատուելու հնարաւորութիւն չկայ, քանի որ անկարելի է վճարել (Ղ. ճակեցի, Դրախտ Ցանկալի):

Մատթ., ԺԲ, 32.- «Բայց ով Սուրբ Հոգու դէմ հայիոյի, նրան չի ներուի ոչ այս աշխարհում, ոչ էլ՝ գալիքում»:

Այստեղից էլ եզրակացնում են, որ գալիք աշխարհում (մահուանից յետոյ) ներուելու հնարաւորութիւն կայ:

Այս համարը Յիսուսի ասած ամենախիստ խօսքերից են. խօսքեր, որտեղ Յիսուս ներկայացնում է մեղքի ահաւորութեան չափը եւ ոչ թէ ներելու կարողութեան սահմանափակութիւնը: Ինչպէս վերելում տեսանք («մինչեւ» բառը), միշտ չէ, որ ճիշտ

սկզբունքը ժխտելով, ստանում ենք դարձեալ ճիշտ սկզբունք: Այսինքն՝ եթէ մեղքը չի ներուի ոչ հիմա եւ ոչ է գալիքում, ապա ամենեւին չի նշանակում, որ գալիքում կայ «ներուելու» հնարաւորութիւն: Իսկ որ գալիքում չի ներուի, դա ճիշտ է, քանի որ ներուելու միակ ժամանակը եւ տեղը այս աշխարհն է: Հետեւաբար, այս համարն էլ է ժխտում քաւարանի սկզբունքը: Այդ համարի մասին ճակեցու մօտ կարդում ենք.

«Գալիքում չկայ թողութիւն երկու պատճառով. նախ, որ այնտեղ չկայ մեղք գործել, հետեւաբար չկայ եւ մեղքի թողութիւն: Քանի որ այս կեանքն է մեր գործելու տեղը, իսկ այն կեանքը՝ դրա հատուցումը՝ բարին կամ չարին: Այս կեանքն է սերմանելու ժամանակը, այն կեանքը՝ հնձելու ու ժողովելու. այստեղ աշխատելն է, այնտեղ՝ հանգստանալը: Ինչպէս Ոսկեբերանն է ասում, հանդերձեալում չկայ թշնամութիւն, փորձութիւն եւ բարի խոստումների ակնկալութիւն, այլ՝ վայելումը այդ խոստումների:

Երկրորդ՝ ինչպէս մարմինը չի փոխում, երբ հոգին ելնում է, ոչ բարու եւ ոչ էլ չարի, այնպէս էլ հոգին: Ըստ Սողոմանի (Ժող. ԺԱ, 3), երբ փայտը (ծառը) որեւէ կողմի կայր է ընկնում, մնում է նոյն տեղում: Եթէ հարաւ՝ ապա Աստուծոյ սիրոյ եւ ջերմութեան տեղում է, իսկ եթէ հիւսիս՝ Աստծու ատելութեան, ցրտի ու խաւարի տեղում է»: Այսինքն՝ հարաւը դրախտն է, իսկ հիւսիսը՝ դժոխքը, եւ մի ուրիշ՝ երրորդ տեղ (քաւարան) չկայ:

Եւ այսպէս, Հայ Եկեղեցու դիրքորոշումը այս հարցի վերաբերեալ հետեւեալն է. Ոչ մի քաւարանական կրակ չի կարող մեղաւորին քաւել մեղքերից, որովհետեւ մեռնելուց յետոյ այլեւս չկայ ապաշխարութեան տեղ, այլ միակ ապաշխարութեան տեղը այս կեանքն է եւ միակ քաւարանը՝ Եկեղեցին:

Մեր բոլոր մեղքերի համար Քրիստոս յանձն առաւ իր գերահրաշ պատարագով քաւել եւ ճշմարիտ զղջացողը անպատճառ թողութիւն կստանայ այս աշխարհում՝ Քրիստոսի շնորհքով:

ՊՍԿԵՐԱՊՈՇԵՆՈՒԹԻՒՆ

Հարց.- Ի՞նչ է պատկերապաշտութիւնը:

Պատասխան.- Պատկերապաշտութիւնը պատկերներից պաշտամունք մատուցելն է, երկրպագելը: Պատկերապաշտութիւնը յոյն Եկեղեցու առանձնայատկութիւնն է: Դրան հակառակ, բոլոր նրանք, ովքեր դէմ են աստուածապաշտութեան ժամանակ պատկերների գործածութեանը, կոչուեցին պատկերամարտներ: Յոյն Եկեղեցու պատմութիւնը լեցուն է այդ ուղղութիւնների անզիջուն պայքարով: Բիւզանդական շատ կայսրեր (Լեւոն Իսրաւրեցի, Կոստանդին Կոփրոնիմոս, Լեւոն Դ, Լեւոն Ե Հայկազն եւ այլն), լինելով համոզուած պատկերամարտներ, փորձեցին վերացնել պատկերների գործածութիւնը: Ընդդիմադիր կողմն էլ իր հերթին պայքարում էր նրանց դէմ: Երկուստեք հիմնաւորում էին իրենց գաղափարները, տարբեր փաստարկներ բերելով թէ՛ Ս. Գրքից, թէ՛ Աւանդութիւնից: 754 թ.- ին Բիւզանդական պատկերամարտ կայսրերը մի ժողով գումարեցին Պոլիսում, ուր 338 հոգեւորականների մասնակցութեամբ դատապարտուեց պատկերապաշտութիւնը եւ կայսրութեան տարածքում սկսեցին հալածել պատկերապաշտներին: Որոշ ժամանակ անց յաղթանակեցին պատկերապաշտները եւ Եկեղեցում գումարեցին եօթներորդ Տիեզերական ժողովը (787 թ.): Ժողովը անօրինական համարեց նաժուր ժողովը՝ իր որոշումներով հանդերձ: Չնայած, որ յետագայում պատկերամարտները զուլի բարձրացրին եւ ընդդիմացան, Տիեզերական է ժողովը ընդունուեց որպէս վերջնական, եւ պատկերամարտութիւնը պարտուեց: Յետագայ ժողովները հաստատեցին է Տիեզերական ժողովի որոշումները եւ պատկերապաշտութեան ուղղափառութիւնը: Այսպիսով, անելի քան հարիւր տարի տեսած այս «պատերազմը» աւարտուեց պատկերապաշտութեան վերջնական յաղթանակով, որն էլ մինչ հիմա գոյութիւն ունի

Ուղղափառ եկեղեցիներում: Լատին եկեղեցին եւ ընդունեց պատկերապաշտութիւնը (Նիկիայում գումարուած է Տիեզերական ժողովը եղաւ վերջինը, որի տիեզերականութիւնը ճանաչեցին միաժամանակ եւ Յռոմի եկեղեցին, եւ Ուղղափառ եկեղեցին):

Այժմ մի քանի խօսք Հայ եկեղեցու դիրքորոշման մասին:

Հայոց եկեղեցիները ունեն խաչածե կառուցուածք, ուր չորս սիւների վրայ ամրացում է վեղարածե գմբէթ՝ համաձայն Լուսաւորչի տեսիլքի: Եկեղեցու բեմը միշտ նայում է դէպի արեւելք, որպէս օրինակ արեգակի՝ լոյսի, իսկ մուտքը արեւմուտք, խորհրդանշելով հեթանոսութիւնից դէպի աստուածային լոյսի գալը: Հայ եկեղեցին իր ամենօրեայ կարիքների համար օգտագործում է զանազան եկեղեցական սպասքներ, աստուածապաշտական տարբեր իրեր: Բոլոր այդ պարագաները՝ խաչերը, պատկերները եւ այլն, օրհնում են եւ օծում՝ յետագայ օգտագործման համար: Պատկերները եկեղեցում ընտրում եւ ընդունում են յատուկ սկզբունքով: Մերժում են կուռքերին յիշեցնող հեթանոսական պատկերները: Հայ եկեղեցին սովորեցնում է երկրպագել միայն Աստծուն: Սրբերի պատկերները յարգելի են մեզ, որովհետեւ պատմում են նրանց աստուածահաճոյ վարքը, գործերը, որոնք Աստուած կատարել է նրանց միջոցով: Առհասարակ, ինչ պատկեր որ օրհնում է, միշտ շեշտում է աղօթքի մէջ, որ Աստուած այդ պատկերը դարձնի «պատճառ երկրպագութեան համազոյ Երրերդութեան»:

Հայ եկեղեցում, ի տարբերութիւն պատկերապաշտութեան գոյութիւն ունի պատկերայարգութիւն, որը յորդորում է հաւատացեալներին ձգտել աստուածահաճոյ կեանքի: Պատկերների յարգութիւնը երկրպագութիւնն է: Պատկերապաշտութիւնը նշանակալից տեղ չի գրաւել Հայ եկեղեցու կեանքում: Հայ մատենագրութեան մէջ քիչ են այն երկերը, որոնք նուիրում են պատկերապաշտութեանը: Առաւել յայտնի աշխատութիւնն է Վրթանէս Քերթոզի «Պատկերամարտների մասին» երկը (7-րդ դար): Իր վարդապետական դիրքորոշումը այդ խնդրի վերաբերեալ, Հայ եկեղեցին ճշտել էր դեռ իր սկզբնաւորման ժամանակ եւ ամենեւին էլ նպատակայարմար չի գտել խառնուել երկու մեծ կայսրութիւններում (Բիւզանդիա, Հռոմ) ծաւալուող դաւանական վեճերին, որոնք իրենց դիրքորոշումը ճշտեցին միայն 8-9-րդ դարերում: Այդպիսի վեճերից օգուտ չկար՝ վնասից բացի:

Դեռեւս առաջին դարում հայոց մէջ յայտնի էին Ս. Դաստառակի եւ Աստուածամօր պատկերի պատմութիւնները: Ս. Դաստառակը (դաստառակ՝ նշանակում է թաշկիհակ, երեսի սրբիչ) կամ Յիսուսի «անձեռագործ պատկերը», ըստ աւանդութեան Հայաստան է բերել Աբգարի դեսպաններից մէկը՝ Անանը: Նրանք գնացել էին Յիսուսի մօտ՝ Աբգար թագաւորի նամակը յանձնելու: Այնտեղ Անանը փորձում է նկարել Քրիստոսին, բայց չի կարողանում: Յիսուսն էլ վերցնում է մի դաստառակ եւ դնում իր երեսին, որից յետոյ իր պատկերը նկարում է դաստառակի վրայ: Այդ դաստառակը նա յայնձնում է Անանին, որն էլ բերում է Երեսիայում եւ պահում է եղեսիայում: Միւս աւանդութիւնը կապուած է Աստուածամօր պատկերի հետ: Երբ մահանում է Տիրամայրը, Բարդուղիմէոսը առաքեալների հետ չի լինում, եւ երբ վերադառնում է, նրան նուիրում են Ս. Կոյսի պատկերը՝ նկարուած փայտի վրայ: Նա էլ, գալով Հայաստան, իր հետ բերում է այդ պատկերը, որն ըստ աւանդութեան, պահում է Ամծեւացեաց գաւառում: Այստեղից է գալիս պատկերայարգութիւնը հայոց մէջ:

Հարց.- Բայց մի՞թէ եկեղեցում պատկեր դնելը ճիշտ է:

Պատասխան.- Ինչպէս տեսանք, Հայ եկեղեցու դիրքորոշումը պատկերների հարցում ուղղուած է ոչ թէ «անշունչ» պատկերին, այլ պատկերի միջոցով մարդկանց «համազոյ Ս. Երրերդութեան» երկրպագութեանն ուղղելու: Այդպէս էլ գրուած է «Մաշտոցում»՝ պատկերի օծման եւ օրհնութեան կարգում. «Սուրբ Տէր, սրբեք՝ զկենդանագիր պատկերս զայս սրբոց քոց վկայից՝ ի պատիւ եւ յերկրպագութիւն ամենասուրբ

Երրորդութեանդ»:

Հարց.- Իսկ ինչո՞ւ են օծում պատկերները:

Պատասխան.- Հայոց մէջ օծում են ոչ միայն պատկերները, այլ նաեւ եկեղեցու շէնքը: Նոր կառուցուած եկեղեցին առանց օծուելու միայն շինութիւն է ու ոչ թէ՛ եկեղեցի: Այդպիսի շէնքում չի կարելի կատարել եկեղեցու խորհուրդներից եւ ոչ մէկը: Ինչպէս գիտենք, մկրտուելուց յետոյ քահանան դրոշմում է մկրտուածին Ս. Միւռնով: Կնքուելուց յետոյ մկրտուածը դառնում է կենդանի տաճար Աստծու համար (Ա Կորնթ. Գ, 16): Եկեղեցու շէնքն էլ օծուելուց յետոյ է դառնում եկեղեցի, ուր կարելի է կատարել Ս. Պատարագը եւ խորհուրդները:

Հարց.- Ինչո՞վ են հիմնաւորել օծման այդ կարգը:

Պատասխան.- Յակոբ ճահապետի յայտնի պատմութեան մէջ (Ծննդոց ԻԸ, 10 - 18), նա օծում է եւ Բեթէլ (թարգմանում է Աստծու տուն) անուանում այն քարը, որի վրայ դրել էր զլուխը: Այդ պատմութեան մէջ հայրերը տեսել են ապագայ եկեղեցու խորհրդանիշը: Ուրեմն, ամէն մի սպասք, պարագայ, որ մտնում է եկեղեցի՝ օգտագործման համար, պէտք է օծուի եւ օրհնուի, որպէսզի առանձնացուի միւս առարկաներից: Այս «առանձնացումն» էլ յաճախ կարելի է տեսնել եկեղեցիներում, երբ հաւատացեալները համբուրում են պատկերները: Իհարկէ, դա ոչ թէ երկրպագութիւն է այլ՝ յարգանքի համբոյր, եւ ոչ թէ անշունչ առարկային, այլ նրա վրայ պատկերուած նախակերպարին:

ԱՆԱՐԱՏ ՅՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հարց.- Ի՞նչ է «Անարատ յղութեան» վարդապետութիւնը:

Պատասխան.- Քրիստոնէական եկեղեցին իր պատմութեան գրեթէ բոլոր ժամանակներում միշտ եղել է պայքարի մէջ: Միշտ էլ փչել են զանազան վարդապետական քամիներ, զանազան գաղափարներ, որոնք, որպէս կանոն, իրենց համարել են ճիշտ, իսկ եկեղեցուն՝ սխալ: Եւ միշտ էլ այդ վարդապետութիւնները եւ գաղափարները հակահարուած են ստացել եկեղեցու կողմից՝ անարատ պահելով ճշմարիտ դաւանութիւնը: Քրիստոսի մարդեղութեամբ սկսւում է նրա աստուած մարդկային կեանքը: Քրիստոս կատարելապէս ազատ էր մեղքից, որովհետեւ եթէ մեղաւոր լինէր, չէր կարող ներկայացնել այն կատարելութիւնը, որով նա միջնորդ դարձաւ մարդկանց եւ Աստծու միջեւ: Իր երկրաւոր կեանքում նա միշտ յաղթող էր: «Հաւատամքում» արտայայտուած է այն պարզ դաւանանքը, որ Քրիստոս կատարեալ մարդ է եւ Աստուած: Այս սկզբունքի դէմ էլ ժամանակին տարբեր մոլորեցնող վարդապետներ ելան եւ վեճեր առաջացրին եկեղեցուն: Դրանցից ոմանք ժխտում էին Քրիստոսի Աստուածութիւնը, ոմանք՝ մարդկութիւնը, ոմանք խախտում Սուրբ Երրորդութեան դաւանանքը, ոմանք փրկագործութեան խորհուրդը, ոմանք բաժանում գցում Քրիստոսի Աստուածութեան եւ մարդկայնութեան մէջ եւ այլն: Մինչեւ երրորդ դար, հայրերը իրենց ջատագովութեամբ հաստատեցին եւ փաստեցին քրիստոնէական ճշմարտութիւնները՝ միաբանութեամբ հանդէս գալով յունական գիտեմականների (գնոստիկներ), էթիոնիտութեան, մարկիոնականութեան եւ այլոց դէմ: Այնուհետեւ երեւան եկաւ սաբելականութիւնը, յետոյ՝ արիոսականութիւնը, նեստորականութիւնը: Սաբելականութիւնն ու արիոսականութիւնը դատապարտուեցին Ա եւ Բ Տիեզերական ժողովների կողմից, նեստորականութիւնը՝ Եփեսոսի Գ Տիեզերական ժողովում:

Ե դարում, եկեղեցու մէջ նոր վիճաբանութիւններ սկսեց եւտիքելը, որը Քրիստոսի մէջ անտեսում էր մարդկային տարրը: Այնուհետեւ՝ Պելագոսի անունով մի վանական սկսեց քարոզել, թէ մարդը մահկանացու է ստեղծուած եւ ծնւում է

առաքինութեամբ ու առանց մեղքի. իր կատարեալ ազատութեամբ նա գնում է կամ դէպի առաքինութիւն, կամ էլ դէպի մեղք: Ըստ Պելագիոսի, մարդկանց մի մասը իսկապէս մեղքից ազատ է եւ կարող է ապրել անմեղ կեանքով: Այսինքն Ադամի մեղքը մեր մեղքը չէ, այլ միայն՝ Ադամի: Դեռեւաբար, Պելագիոսը մերժում է «սկզբնական մեղքը»-ի գոյութիւնը: Եկեղեցին, իհարկէ, դուրս եկաւ Պելագիոսի դէմ: Թ դարում Զոննի Եկեղեցին, ազդուելով Պելագիոսի գաղափարներից, սկսեց դաւանել Ս. Կոյսի անարատ յղութիւնն ու ծնունդը՝ Յովակիմից եւ Աննայից, բայց յետոյ հրաժարուեց այդ դաւանանքից: Սօտ հազար տարի անց՝ 1854 թ.-ին, Պապն ընդունեց եւ կանոնացրեց այդ սկզբունքը, դաւանելով, որ Ս. Կոյսը ծնունդ է Յովակիմից եւ Աննայից առանց աղանական մեղքի: Այս է «Անարատ յղութեան» վարդապետութիւնը: Զայ եկեղեցին մերժում է այդ վարդապետութիւնը եւ ընդունում է, որ Ս. Կոյսը ծնունդ է աղանական մեղքով, բայց Աստուածային մեծ ուխտի կատարման համար վայելել է մի առանձին շնորհ, իրայատուկ օրհնութիւն (Ղուկաս Ա, 30), որովհետեւ մայր պիտի լինէր Աստուածորդու: Այդ առանձնաշնորհման մասին գրուած է Ղուկասի Աւետարանի առաջին գլխում:

Զարց.- Զոննի Եկեղեցին ինչպէ՞ս է հիմնադրում «Անարատ յղութեան» վարդապետութիւնը:

Պատասխան.- Զիմնականում վկայակոչում է Ծննդոց Գ, 15 - ը, Ղուկաս Ա, 28 - ը եւ ուրիշ համարներ:

Ղուկաս Ա 28.- «Ողջոյն քեզ շնորհընկալ կոյս, Տէրը քեզ հետ է. դու օրհնեալ ես կանանց մէջ»:

Ըստ կաթոլիկների, այս առանձնաշնորհումը պիտի արտայայտէր նրա «անարատ յղութեամբ», մինչդեռ Աստուածամօր մեծութիւն այն է, որ նա լինելով մեզ նման մեղաւոր, Աստուածային ծրագրի իրականացման միջոց դարձաւ: Դրանով իսկ մեզ համար օրհնակ եղաւ թէ՛ նրա հաւատը, թէ՛ նրա վստահութիւնը Աստծու խօսքին, թէ՛ նրա խոնարհութիւնը:

Ծննդոց Գ 15.- «Եւ ես թշնամութիւն եմ դնում քո եւ կնոջ մէջտեղ, քո սերունդի մէջտեղ. նա քո գլուխը կջախջախի եւ դու նրա գարշապարը պիտի խայթես»:

Այս համարում տեսնելով այն «կնոջը», որի սերունդը (Քրիստոս) պիտի ջախջախէր օծին, Զոննի Եկեղեցին ընդունում է, որ ի սկզբանէ Աստուած պատրաստել է պահել էր «այդ կնոջը», նրան ազատելով աղանական մեղքից, այդ մեծ գործի համար:

Ինչ խօսք, որ «այդ կինը» պիտի օրհնեալ լինէր բոլոր կանանցից, բայց նա եւս պիտի կարիք ունենար փրկչի, որի մասին Ս. Կոյսը ասում է իր օրհներգութեան մէջ (Ղուկ. Ա, 46 - 47). «Իմ անձը փառաւորում է Տիրոջը, եւ իմ հոգիս հրճուում է իմ Փրկիչ Աստուծով»: Այդ «թշնամութիւնը» պարզ երեւում է ամբողջ Ս. Գրքի մէջ. նրա բոլոր էջերում հանդիպում ենք այդ «թշնամութեանը», որն իրականացաւ Ս. Կոյսի միջոցով: Քրիստոսն էր այդ «թշնամութեան» զագաթնակետը, որը ջախջախեց օծի գլուխը: Դա թշնամութիւն էր բարու եւ չարի, խաւարի եւ լոյսի միջեւ: Եկեղեցու հայրերը այդ համարի մէջ տեսել են ոչ թէ Եւային, այլ՝ Ս. Կոյսին, որի մէջ այդ «թշնամութիւնը» մարդեղացաւ: Առաջին կնոջ եւ օծի բարեկամութիւնից մեղքն ու մահը առաջացավ, իսկ այս «թշնամութիւնը» փրկարար եղաւ մարդկանց համար: Դեռեւաբար, Ծննդոցի այդ համարը մարգարտութիւն է Ս. Կոյսի եւ նրա սերնդի մասին եւ ամենեւին էլ այստեղից չի հետեւում, որ Ս. Կոյսը պիտի ծնուէր անարատ յղութեամբ: Ս. Կոյսն իր կեանքով, վարքով, հաւատով, խոնարհութեամբ այնքան մեծ է եւ վեհաշուք, որ ամենեւին կարիք չունի մարդկանց կողմից անելորդ անհարկի «փառաբանման»:

Զարց.- Ի՞նչ է «Ս. Զոնու Բխման» վարդապետութիւնը:

Պատասխան.- Ս. Զոնու մասին Տիեզերական Ա - Գ ժողովներում ընդունել է հետեւեալ սկզբունքը. Սուրբ Զոնին բխում է միայն Զայր Աստուծուց, բայց Որդին կարող է ուղարկել նրան: Այս ձեւակերպումը ընդունելի է եղել Նախնի Եկեղեցում: Զ - Ե դարերում այդ սկզբունքին աւելացուեց «յՈրդոյ» (լատիներէն՝ ֆիլիոցուէ) յաւելումը, որը Կարլոս Մեծ կայսրը պահանջեց մտցնել Զաւատանքի մէջ, սակայն Յովհան Ը Պապը չընդունեց եւ դատապարտեց այդ արարքը: Յետագայում (ԺԱ դար) Զոննի Բենեդիկտ Պապը ընդունեց այդ յաւելումը եւ այն աւելացրեց Զանգականին: Դրանով իսկ Կաթոլիկ Եկեղեցին դուրս եկաւ իր իսկ վարդապետութեան դէմ: Եթէ Զոննի Պապը անսխալական է դաւանական հարցերում, ապա այդ անսխալականութիւնը ժամանակային սահմանափակում պէտք է չունենայ: Դեռեւաբար, եթէ Պապը ընդունում է որեւէ որոշում, իսկ մի ուրիշ Պապ ընդունում է դրան հակառակ որոշում, ապա խախտում է Պապի «անսխալականութիւնը», անկախ այն բանից, թէ երբ է ընդունուել այդ որոշումը: Ինչպէս արդէն գիտենք, այդ յաւելման պատճառով էլ Զոննի եւ Բիւզանդական Եկեղեցիները վերջնականօրէն բաժանուեցին:

Զայ եկեղեցին հաւատարիմ մնալով Նախնի Եկեղեցուն, չընդունեց այդ յաւելումը եւ մերժեց այն:

Ինչ խօսք, որ այս դժուարութիւններէն ու հակամարտութիւնները հետեւանք են Ս Երրորդութեան մասին եղած վարդապետութեան, որն անչափ դժուար եւ անհնար է հասկանալ կամ պատկերացնել միայն տրամաբանութեամբ. անհրաժեշտ է որպէս մեկնակէտ ունենալ եւ հաւատը, եւ Ս. Գիրքը, եւ Զայրերի մեկնութիւնները եւ այլն:

Աւետարանում Ս. Զոնին ներկայացուում է որպէս մի գորութիւն, որ գործում է մարդկանց մէջ զանազան կերպերով: Ս. Զոնին մի դէպքում ներկայացուում է որպէս շունչ, քամի, մի ուրիշ դէպքում աղանի, հրեղէն լեզու եւ այլն: Այս ամենը բնորոշում է ոչ թէ նրա էութիւնը, այլ՝ գործունէութիւնը: Մենք գիտենք, որ Ս. Զոնին Երրորդութեան մի անձն է. իբրեւ կատարեալ Աստուած նա հաւասար է Զօրը եւ Որդուն: Եւ բոլոր ստորագելիները, որ տրուած են Զօրը եւ Որդուն, կարելի է վերագրել նաեւ Ս. Զոնուն:

Ինչպէս Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւնների փոխարաբերութեան հարցի քննարկումը տրոհեց Արեւելեան Եկեղեցին (Քաղկեդոնի ժողովը), այնպէս էլ Ս. Զոնու բխման հարցը պատճառ եղաւ Արեւելեան եւ Արեւմտեան Եկեղեցիների մեծ պառակտմանը: Այդ ժամանակներում հարցը դրուել էր այսպէս. Ս Երրորդութեան առաջին անձը՝ Զայրը, անսկիզբ է եւ անպատճառ, երկրորդ անձը՝ Որդին, ծնունդ է Զօրից եւ Երրորդ անձը՝ Ս. Զոնին, բխելիութիւն է: Դեռեւաբար հարց է ծագում, թէ այդ բխելիութիւնը ումի՞ց է՝ Զօրից, Որդուց, թէ՞ երկուսից:

Բոլոր Արեւելեան Եկեղեցիների ընդունած դաւանանքի համաձայն (այդ թւում նաեւ Զայ եկեղեցու) Ս. Երրորդութեան մէջ մէկ բացարձակօրէն «անսկիզբ» էակ կայ, Զայրը որպէս պատճառ եւ միակ սկզբունք միւս երկու անձերի՝ մէկի ծննդի եւ միւսի բխման: Այս ըմբռնումը ընդունելի էր նոյնիսկ Քաղկեդոնից յետոյ՝ մինչեւ Զ - Ե դարերը: Այդ ժամանակներում յոյն եւ լատին Եկեղեցիները վեճ չունէին «բխման» հարցում: Սկսած է դարից Եւրոպայում սկսեցին օգտագործել նաեւ «եւ յՈրդոյ» յաւելումը, որն էլ ԺԱ դարում առաջ բերեց մեծ պառակտումը:

Եւ այսպէս, Զոննի Եկեղեցին ընդունեց, որ Սուրբ Զոնին բխում է ոչ միայն Զօրից, այլ նաեւ՝ Որդուց, մինչդեռ Յոյն Եկեղեցին (Ուղղափառները) ընդունեց, որ Ս. հոգին բխում է միայն Զօրից:

Զայ եկեղեցու դիրքորոշումը այդ խնդրի վերաբերեալ հիմնուած Աւետարանի այն պարզ վկայութեան վրայ, ուր Յիսուս ասում է. «Երբ գայ Մխիթարիչը, որին առաքելու եմ Զօրից, ճշմարտութեան Զոնին, որն ելնում է Զօրից, նա կվկայի իմ մասին» (Յովհ.ԺԵ, 26): Գրաբարում «զոր ես առաքեցից ձեզ ի Զօրէ, գՂոգին ճշմարտութեան որ ի Զօրէ ելանէ»: Այսինքն Սուրբ

Յոգին բխում, էլնում է միայն Յորից: Բայց կայ մի ուրիշ համար (Յովհ. ԺԶ, 14), ուր Յիսուս ասում է. «Նա ինձ կփառաւորի, ինձնից կառնի եւ ձեզ կպատմի»: Գրաբարում «Նա զիս փառաւորեցէ, զի յիմն անտի առնուցու եւ պատմեցէ ձեզ»: Այս երկու վկայութիւններում օգտագործուած բայերը բնագրում տարբեր են: «Բխման» ջատագովները նոյնացնում են այդ բայերը եւ այդպիսով ստանում «Բխման» հիմնաւորումը: Բայց, եկեղեցու հայրերը երբեք էլ չեն նոյնացրել այդ բայերը, ակելին, օգտագործման ձեւն ու տեղը համոզում են, որ երկրորդ դէպքում «կառնի» բայը օգտագործուած է ոչ թէ «եկնել» կամ «ծագել» իմաստով, այլ՝ առաքելութեան: Այսպէս՝ «Ինձնից կառնի եւ ձեզ կպատմի» դարձուածքում Յիսուս ակնարկում է աշակերտների առաքելութիւնը, քանի որ Մխիթարիչն արդէն խոստացուած էր աշակերտներին: Յաջորդ համարում (Յովհ. ԺԳ, 15) Յիսուս ասում է. «Ամեն ինչ, որ Յայրն ունի, իմն է, դրա համար ասացի ձեզ, որ իմից կառնի ու ձեզ կպատմի»: Բնագրում այս երկու համարների մէջ օգտագործուած բայերը («առնել», «ընդունել») նոյնն են եւ տարբերում են միայն ժամանակով. ԺԶ, 15-ում ժամանակն ապառնի է, իսկ ԺԶ 16 - ում՝ ներկայ: «Բխման» ջատագովները այստեղից եզրակացնում են, որ եթէ ամեն ինչ, որ ունի Յայրը, նաեւ Որդունն է, ուրեմն Ս. Յոգին, որ բխում է Յորից, բխում է նաեւ Որդուց: Այս տրամաբանութիւնը անընդունելի է եղել հայրերի կողմից (տես՝ Տաթեւացու մեկնութիւնը ստորեւ), որովհետեւ նման դատողութեամբ կատարուի, որ Որդին էլ ծնուած է Ս. Յոգուց, որովհետեւ ինչ որ իր բնութեան մէջ ունի Յայրը, նոյն էլ պետք է ունենայ Սուրբ Յոգին, որպէս «համազոյ» Յայր Աստծուն: Մինչդէռ Յաւատամքը թելադրում է, որ Որդին «ծնուած է Յայր Աստծուց», եւ «Ս.Կոյս.Մարիամից կատարելապէս ծնուեց Ս. Յոգով»: Ուրեմն, «առնել» բառն այստեղ օգտագործուած է առաքելութիւն ստանալու իմաստով, բայց ոչ երբեք բնութեան, էութեան բխումով: Միւս կողմից «Բխման» վարդապետութեան համաձայն ստացուած է երկու սկզբնապատճառ, երկու աղբիւր եւ հետեւաբար ոչ թէ Երրորդութիւն, այլ՝ չորրորդութիւն, մինչ կայ մէկ սկզբնապատճառ, որից ծնում է Որդին եւ բխում Յոգին:

Ս. Յոգին քրիստոնէական վարդապետութեան մէջ կարեւոր տեղ է զբաւում, քանի որ ոչ միայն Երրորդութեան մի անձնաւորութիւն է այլ նաեւ Աստծու շնորհքի միջնորդը: Նրա միջոցով Աստուած իր շնորհքները պարզեւում է մարդկանց: Մարդը միշտ ձգտում է չարին ակելի, քան բարուն: Ուստի Աստուած Ս. Յոգին ուղարկեց, որպէսզի օգնի մարդկանց յարթելու չարին եւ արժանացնելու աստուածային սրբութեանն ու փառքին:

Այսպիսով, մեր եկեղեցին Որդու համար ասում է «Յաւիտենից ծնունդ», իսկ Ս. Յոգու համար՝ «Յաւիտենից բխումն»: Ինչպէս տեսանք, դժուար է բացատրել այս երկու բառերի տարբերութիւնը, սակայն նրանք ամենեւին նոյնը չեն: Յայրերը Ծնունդի եւ Բխման այդ յարաբերութիւնը բացատրելու համար բերել են հետեւեալ պարզ օրինակը.

զաղափարի ծնունդը մարդու մէջ - Ծնունդ, եւ
խօսքի արտաբերումը - Բխում,

որոնք չնայած միեւնոյն խորհուրդն են արտայայտում, սակայն իրարից տարբեր բաներ են: Մենք չենք կարող իմանալ, թէ ինչո՞ւ Որդին Ծնունդ է, Յոգին՝ Բխում կամ թէ ինչո՞ւ Որդին Ծնեալ է եւ ոչ թէ Ծնող եւ բխող. կամ ինչո՞ւ Յոգին բխեալ է եւ ոչ Ծնող, եւ կամ ինչո՞ւ Յայրը ծնող է եւ բխող, եւ ոչ ծնեալ եւ բխեալ: Այս ամենի մէջ առանց Աստծու ամենագոր օգնութեան եւ յայտնութեան անհնար է զլուխ հանել, ուստի եւ վստահելով մեր հայրերին, հիմնուելով Ս. Գրքի ու եկեղեցու Ավանդութեան վրայ, այդ բարդ զաղափարները պետք է հաւատով ընդունիլ եւ պաշտպանել ամեն մի նորահնար հերձուածից այնպէս, ինչպէս ժամանակին մեր հայրերն այդ արեցին՝ մեզ աւանդելով ճշմարիտ դաւանութիւնը:

Յարց- Ինչպէ՞ս են հիմնաւորել «Բխման» վարդապետութիւնը կաթոլիկ հայրերը:

Պատասխան.- Վերելում արդէն նշեցինք Բխման վարդապետութեան հիմնական ակունքները: Աւելի ամփոփ այս մասին կարդում ենք Տաթեւացու «Գիրք հարցմանցում» (էջ 62):

«Նրանք («Բխման» ջատագովները) ասում են, որ Ս. Յոգին բխում է Որդուց, քանի որ.

ա. յաճախ Ս. Յոգին անուանում է Քրիստոսի Յոգի (Յոռն., Ա, 9, Գաղ., Դ, 6 եւ այլն),

բ. Յիսուս փչեց առաքելների վրայ եւ ասաց՝ «Առեք Յոգին Սուրբ...» (Յովհ., Ի, 22),

գ. Յիսուս ասաց. «Գնան եւ կառաքեմ Ս. Յոգին...» (Յովհ., ԺԶ, 7),

դ. Յիսուս ասաց. «Ինձնից կառնի եւ ձեզ կպատմի» (Յովհ., ԺԶ, 14),

ե. Յիսուս ասաց. «Նա ինձ կփառաւորի» (Յովհ., ԺԶ, 14) եւ այլն»:

Եւ Տաթեւացին նոյն տեղում հերքում է այդ փաստարկները եւ տալիս իր մեկնութիւնը.

«ա. Քանի որ Ս. Յոգու գործունէութիւնը սկսուեց Քրիստոսի աշխարհ գալով, դրա համար էլ նրան անուանում են Քրիստոսի Յոգի:

բ. Եթէ փչելը նշանակում է բխելը, ուրեմն Որդին էլ Ս. Յոգու ծնունդն է (ինչպէս ասաց հրեշտակը Դուկ. Ա, 35 - ում), այնինչ դրանով յայտնուած է միեւնանց գործակից լինելը:

գ. Եթէ ասենք, որ Յոգին առաքեց Որդին, ապա նոյն ձեւով էլ Որդին եւ Յորից է, եւ Յոգուց, մինչդէռ այդտեղ ցոյց է տրուած Աստծու Կամքի հաճութիւնը:

դ. Այստեղից ոչ թէ բխումն է հետեւում, այլ՝ նրանք միութիւնը: Ե. Եթէ Յոգին փառաւորում է Որդուն եւ այդտեղից հետեւի, որ Յոգին ծնում, բխում է Որդուց, ապա քանի որ Յայրն էլ փառաւորում է Որդուն (Յովհ. ԺԲ, 12), ուրեմն Յայրն էլ ծնում է Որդուց. մինչդէռ այստեղ ցոյց է տրուում պատուի հաւասարութիւնը Որդու եւ Ս. Յոգու միջեւ»:

Յայ կաթոլիկ հայրերն էլ միշտ ձգտել են ապացուցել «Բխման» վարդապետութեան ուղղափառութիւնը ու մեղադրել են Յայ եկեղեցուն, այն չընդունելու համար: Որպէս կանոն, նրանք, (Չամչեան, Աւետիքեան) «փաստարկներ են բերել Յայ եկեղեցու հայրերի երկերից, ցոյց տալու համար, որ նրանք ընդունել են «Բխման» վարդապետութեան ուղղափառութիւնը:

Ամենայայտնի օրինակներն են Ս. Գրիգոր Լուսաւորչի Վարդապետութիւնից մի համար (Ազաթանգեղոս, &362), Նարեկոցու Մատեանի հԸ գլխի վերջին տողերը եւ այլն: Ազաթանգեղոս, &362. «Յայը յամձնէ, Որդի ի Յօրէ, Յոգին ի նոցունց՝ ի նոսին», որ թարգմանում է. «Յայրը ինքն իրենից է, Որդին՝ Յորից, Յոգին՝ նրանցից ու նրանց մէջ»:

Այստեղից էլ եզրակացնում են, որ Լուսաւորչիք նկատի ունէր Ս. Յոգու էլնելը Որդուց: Մինչդէռ հայրերը Լուսաւորչի այդ ասածը հասկացել են ոչ թէ որպէս բխումն երկուսից, այլ որպէս երկուսի բնութիւնից եւ մէկը նրանցից: Եւ ամենեւին «նրանցից մէկը» ասելը չի նշանակում նրանցից ծնուած լինել:

Մատեան, զլուխ հԸ. «Եւ քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ,

ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց,

Սուրբ Երրորդութեանդ եւ միում Աստուածութեանդ

Փա՛ռք եւ իշխանութիւն յաւիտեանս»:

Այստեղից էլ եզրակացնում են, որ վերջին մասում Նարեկացին ակնարկում է «Բխումն» Որդուց. «սկզբնաւորիդ» եւ «սկզբանց»,

այսինքն՝ եւ Յօրից, եւ Որդուց է սկիզբ առնում Հոգին: Մինչդեռ Նալեանը («Գիրք մեկնութեան...») այդ հատուածը մեկնում է այսպէս. «Եւ քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ» - վերաբերում է Հօրը, որը սկիզբն է Որդու ծննդեան եւ Հոգու բխման: «Ընդ սկզբանդ» - Որդին է, ստեղծութեան գոյութեան սկիզբը: «Սկզբնաւորիդ սկզբանց» - Հոգին է, սկզբնաւոր է Հօր Արարչութեան գործին, այսինքն՝ Արարչութեան ժամանակ (Սկզբում) Հօր եւ Որդու հետ էր:

ՀԱՆԴԵՐԾԵԱԼ ԿԵԱՆՔ

Հարց.- Ի՞նչ է հանդերձեալ կեանքը:

Պատասխան.- Հանդերձեալ կեանքի մասին ուսմունքը համարում է քրիստոնէական վարդապետութեան մի օղակը: Այս մասին խօսելիս կամ խորհելիս պէտք է առաջնորդուել աստուածաբանական հետեւեալ կարեւոր սկզբունքով.

«Պէտք չէ անյայտ բաների մասին ստեղծել նոր յայտնութիւններ» (Օրմանեան):

Երբ որեւէ բան Ա. Գրքում յայտնուած չէ, ապա որքան էլ մարդիկ ուզենան հասկանալ եւ ստեղծել այս կամ այն վարդապետութիւնը այդ հարցի վերաբերեալ, միեւնոյն է, այն չի կարող յաւակնել բացարձակ ճշմարտութիւն լինելու: Բնական է, որ նման դէպքերում տարբեր եկեղեցիներ կունենան տարբեր կարծիքներ: Եկեղեցու պատմութեանը յայտնի են բազմաթիւ դէպքեր, երբ վիճել են երկար տարիներ, հարիւրամեակներ եւ այդպէս էլ չեն յանգել մի որեւէ ընդհանուր եզրակացութեան: Ճիշտ է. հանդերձեալ կեանքի մասին Ա. Գիրքը մեզ տալիս է բաւականին ընդարձակ տեղեկութիւններ, բայց եւայնպէս մանրամասների մէջ լռում է: Ուրեմն, կարելու է իմանալ, թէ ինչ է ասում քրիստոնէական ուսմունքն այդ կեանքի մասին եւ կամ ինչպէ՞ս պէտք է լինի հատուցումը, ե՞րբ եւ ինչպէ՞ս է կատարուելու այդ, ո՞ր եւ գնում հոգիները մահաճալու յետոյ եւ այլն: Նախորդ հարցերում արդէն խօսեցինք քաւարանի «ուսմունքի» մասին եւ տեսանք, թէ այդ հարցում ինչքան են տարբերուում Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիները: Կարելի է ասել, որ «Հանդերձեալ կեանքի» հարցում էլ տարբեր եկեղեցիներ ունեն տարբեր մօտեցումներ եւ ըմբռումներ:

Խօսելով Յաղթական եկեղեցու մասին, անհրաժեշտաբար հարց կառաջանայ, թէ ի՞նչ է այն յոյսը, որին վստահելով քրիստոնէաները ննջեցին ի Քրիստոս, կամ այլ խօսքով՝ ի՞նչ է յաւիտենական կեանքը. մի՞թէ մարդն ամառ է ստեղծուած եւ պիտի ապրի յաւիտեան: Շատերն են շատ բաներ ասել յաւիտենականութեան մասին, բայց միայն Յիսուս եկաւ աշխարհ եւ ցոյց տուեց այդ ճանապարհը, հաւաքեց իր հօտը՝ Եկեղեցին, եւ առաջնորդեց դէպի անմահութիւն: Այդ ճանապարհը նկարագրուած է Աւետարաններում, դրա համար է կոչուում Աւետարան, այսինքն՝ Բարի լուր: Բարի է այդ լուրը, քանի որ ճանապարհն է կեանքի եւ ոչ թէ մահուան: Այդ ճանապարհին կան երկու շատ կարեւոր համարումներ՝ Գողգոթան եւ դատարկ գերեզմանը: Գողգոթան ճանապարհն է բնութագրում (խաչը, խաչի ճանապարհը), իսկ դատարկ գերեզմանը՝ յաղթութիւնը (յարութիւնը) Միայն Գողգոթայի ճանապարհով կարելի է հասնել յարութեան եւ իւրաքանչիւր մարդու կեանք մի ինքնատիպ Գողգոթայի ճանապարհ է, ճանապարհ, ուր ամեն մէկն իր խաչն է տանելու եւ այդպիսով միանալու Յիսուսի հետ Գողգոթայում՝ այնտեղ, ուր Ինքը խաչուեց: Մեռելների յարութիւն ասելով՝ հասկանում ենք, որ ամեն բանական արարած յարութիւն է առնելու՝ հոգին կրկին մարմնի հետ է միաւորուելու Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ: Տարբեր եկեղեցիներ տարբեր ձեւով են պատկերացնում գալիք դէպքերը, նրանց ընթացքը: Բայց այն, ինչում բոլորն են համամիտ, գալիք դէպքերի յաջորդականութիւնն է, որ շարադրուած է Նոր Կտակարանում: Այդ բանում համամիտ են համարեա բոլոր քրիստոնէական եկեղեցիները (չհաշուած վերջին ժամանակների նորահնար

աղանդները, որոնք իրենց անդամների թուի չափ «տեսութիւններ» ու «կարծիքներ» ունեն ցանկացած հարցի վերաբերեալ): Այսպէս, ժամանակների լրումին յաջորդելու է՝ ա. Քրիստոսի երկրորդ գալուստը, որն իր հերթին ունենալու է երկու կերպ.

բ. սկզբում Նա գալու է «գողի» նման, այսինքն՝ աշխարհը չի իմանալու այդ մասին եւ,

գ. յետոյ, որոշ ժամանակ անց (եօթ տարի): Նա կգայ տեսանելի կերպով, որպէս Թագաւոր թագաւորների:

Ա. Գիրքը սովորեցնում է, որ Նրա Գալստի ժամանակ

- ոչ ոք Նրան չի սպասելու (Մատթ., ԻԴ, 4),

- աշխարհը զբաղուած է լինելու առօրեայ գործերով (Ղուկ., ԺԷ, 26),

- ծանր ու դժուար օրեր են լինելու (Բ Տիմ., 15),

- հաւատը տկարանալու է (Ա Տիմ., 1):

«Գողի նման» գալուստի ժամանակ տեղի են ունենալու մի քանի դէպքեր, որոնք նկարագրուած են Պօղոսի թղթերում (Կորնթացիներին, Թեսաղոնիկեցիներին):

դ. յարութիւն են առնելու բոլոր Քրիստոսով ննջածները՝ Յաղթական եկեղեցին (Առաջին յարութիւն),

ե. իսկ նրանք, ովքեր կենդանի են լինելու այդ պահին, այսինքն, Չինուորեալ եկեղեցին, մի ակնթարթում փոխուելու են եւ առանց մահ ճաշակելու Յաղթական եկեղեցու հետ միասին համբառնալու են երկինք: Այս երեւոյթը կոչուում է «Եկեղեցու յափշտակութիւն», քանի որ եկեղեցին իր ամբողջութեամբ (թէ՛ կենդանիները եւ թէ՛ ննջեցեալները) գնալու է իր յաւիտենական օրեւնը՝ Քրիստոս Յիսուսի հետ Քրիստոս Յիսուսի մօտ՝ Երկնքի Թագաւորութիւն: Ըստ այդմ այդ յարութիւնը կոչուում է «Կենաց» յարութիւն:

գ. Եկեղեցու յափշտակութիւնից յետոյ երկրի վրայ այլեւս չի լինելու «Եկեղեցին», այսինքն՝ Ա. Հոգին, որն արգելում էր Հակաքրիստոսին իր գործունէութիւնը ծաւալելու: Սկսուելու է մի ժամանակաշրջան, որի մասին այդքան երկար երազում էին ու ձգտում միջնադարի եւ վերջին ժամանակների ուսուցիստ համայնավարները (որին այդպէս էլ չհասան). աշխարհում չի լինելու քրիստոնէական եկեղեցի, այն տեղափոխուած է լինելու երկինք: Հենց այդ ժամանակ էլ Հակաքրիստոսը հանդէս է գալու որպէս «իսկական մեսիա»: Բայց նրա թագաւորութիւնը կարճ է տևելու. որոշ ժամանակ անց Յիսուս գալու է տեսանելի ձեւով եւ «իր բերանի շնչով կործանելու է Հակառակորդին», ու Սատանան կապուելու է հազար տարի:

է. Սկսուելու է Յիսուսի հազարամեայ թագաւորութիւնը՝ Եկեղեցու հետ միասին:

ը. Հազար տարի անց մնացած մեռածներն են յարութիւն առնելու (երկրորդ յարութիւն): Այդ յարութիւնը կոչուում է «մահուան յարութիւն», քանի որ յարութիւն են առնելու դատաստանի համար:

թ. Վերջին Դատաստանը եւ

ժ. Դժոխքը, ուր պիտի նետուեն Սատանան իր արբանեակների ու բոլոր դատապարտուածների հետ միասին:

Համառօտ այս է քրիստոնէական Վախճաբանութիւնը, այսինքն՝ վերջին ժամանակների մասին գիտելիքները (յունարեւն էլխատողոգիա): Ինչպէս ասացինք, դէպքերի այս յաջորդականութեան հետ համամիտ են համարեա բոլոր եկեղեցիները, բայց մանրութեամբ տարակարծիք:

Մարդու կեանքը, հետեւաբար, կարելի է բաժանել երեք մասի, ներկայ կեանք, միջինը եւ վերջին կեանք: Ներկայ կեանքը գիտութեամբ եկեղեցին է, միջինը մահուանից յետոյ մինչեւ յարութիւնն է եւ վերջին կեանքը՝ յաւիտենական, արդէն անփոփոխ կեանքը: Ներկայ կեանքը սկիզբ է առնում ծնունդով, միջինը՝ հոգու եւ մարմնի բաժանումով, եւ վերջապէս վերջին կեանքը՝ հոգու եւ յարուցեալ մարմնի միացումով:

Հարց.- Որտե՞ղ է անցնում մարդու միջին կեանքը:

Պատասխան.- Նախօրոք ասենք, որ այս հարցն էլ վիճելի է եւ տարբեր եկեղեցիներ ունեն տարբեր կարծիքներ: Այս խնդրի համար մեկնակէտ է հանդիսանում աղքատ Ղազարոսի պատմութիւնը (Ղուկ. ԺԶ 19-31):

«Երբ աղքատը մեռաւ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը. մեծահարուստն էլ մեռաւ եւ թաղուեց: Եւ դժոխքում, մինչ սա տանջանքների մէջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռուից տեսաւ Աբրահամին եւ Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած» (22-23 համարներ):

Յիսուսի պատմած այս առակում շատ իւրայատուկ ձեւով են ներկայացուած աղքատը եւ մեծահարուստը: Այստեղ երկու ձեւի մահուան մասին է խօսում. աղքատը մեռաւ, եւ հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը (Յիսուս աղքատի համար չի ասում, թէ թաղուեց), իսկ հարուստը մեռաւ ու թաղուեց: Առաջին դէպքում հոգին գնում է կենաց «կայան», իսկ երկրորդում՝ մահուան «կայան»: Հայերէնում եւ յունարէնում (բնագրում) այդ համարները ունեն նոյն կետադրութիւնն ու նշանակութիւնը: Լատիներէնում կատարողութեան տարբերութիւն կայ յունարէնի (ուրեմն եւ հայերէնի) համեմատ. 22 եւ 23-րդ համարները բաժանող վերջակէտը տեղափոխուած է մի բառ աջ եւ ստացում է այսպէս. «Եւ հարուստը մեռաւ եւ թաղուեցաւ ի դժոխս»: Այստեղից էլ Կաթոլիկ եկեղեցին յանգում է «առանձնական դատաստանի» վարդապետութեանը. մարդ մեռնելով միանգամից ստանում է իր գործերի հատուցումն ու յարութեան ժամանակ վարձատրուում: Այսինքն՝ բացակայում է «կայանների» կամ միջինի սկզբունքը: Հայ եկեղեցին մերժում է այս «առանձնական դատաստանի» վարդապետութիւնը, որը չի համապատասխանում միջինի կամ «կայանների» աւետարանական սկզբունքներին: Այդպէս, մի փոքրիկ կետադրական նշանի տեղափոխութիւնը կարող է առաջ բերել վարդապետական մեծ նշանակութիւն ունեցող տարբերութիւններ եկեղեցիների միջեւ: «Եւ ի վերջոյ, ի՞նչ է Աբրահամի գոգը, ո՞ւր էր Ղազարոսը. ամեն պարագայի մէջ, յաւիտենական վարձի արքայութիւնը չէր այդ , դժոխքն էլ, ուրեմն, յաւիտենական տանջանքի տեղը չէ այդ առակում» (Օրմանեան): Ըստ Տաթևացու կան երկու կայաններ, մէկը երկնքից վերեւ եւ միւսը՝ ներքեւ: Առաջինի մէջ հաւաքում են բոլոր նրանք, որ թողնելով ամեն ինչ՝ Յիսուսի տեսից գնացին եւ երկրորդում բոլոր նրանք, ովքեր շարժուեցին աշխարհի մեղաւոր սկզբունքներով, աստուածուրաց ճանապարհներով: Առաջին կայանը կոչւում է Աջակողմեան, իսկ երկրորդը՝ Չախակողմեան: Ինչ խօսք, որ Աջակողմեան եւ Չախակողմեան ասելով՝ միւթական իմաստով չենք հասկանում, այլ Քրիստոսի բարի ու բարոյ հայեցողութիւնը, որ Աջն է (Օրմանեան): Շնորհալին իր յայտնի աղօթքում (Հաւատով խոստովանիմ, ԻԱ) ասում է..

«Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեալ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, եւ հանգչել յուսով բարեաց յօթեանմիս արդարոց, մինչեւ յօր մեծի գալստեան քո»:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ էլ «արդարների օթեանը» միջինըն է, «կայանը», ուր հոգիները սպասում են «Գալեստեան օրուման»:

Հարց.- Ի՞նչ է Վերջին կեանքը:

Պատասխան.- Քրիստոնէական հաւատքի եւ վարդապետութեան անմիջական հետեւանքն է մեռելների յարութիւնը: Եկեղեցին փրկագործելով մարդկանց, իրականացնում է Աստուծոյ Արքայութիւնը, սկսելով այս կեանքից, տանելով հաւատեցեալ ժողովրդին փրկութեան ճանապարհով դէպի յաւիտենական կեանք: Աստուած սեր լինելով սիրոյ հաղորդութիւն ունի իր ստեղծած մարդու հետ. եթէ այդ հաղորդութիւնը ժամանակաւոր եւ անցողիկ լինէր, ապա չէր մասնակից լինել Աստուծոյ յաւիտենական սիրուն:

Ա. Գիրքը ամենից շատ հէնց այդ փաստի մասին է ասում ու վկայում: Մինչեւ իսկ Յիսուսի ժամանակներում կային Վերջին կեանքը ժխտողներ (սաղուկեցիները): Պօղոսն էլ քահանայապետի ատեանում, սաղուկեցիներին յանդիմանելու համար, յարութեան հարցը առաջ քաշեց: Ինչպէս տեսանք, գալիք դէպքերի յաջորդականութեան մէջ, Վերջին կեանքը մարդն անց է կացնում կամ Յիսուսի հետ, կամ էլ՝ Նեռի: Այսինքն, այդ է մարդու վերջնական, արդէն անփոփոխ կեանքը, աւարտը մարդու գոյութեան եւ սկիզբը յաւիտենութեան:

Հարց.- Ինչպէ՞ս են կատարում յուղարկաւորութիւնը հայոց մէջ: Մի՞թէ վերջին ժամանակներում լայն տարածում գտած արարողութիւնները ունեն որեւէ հիմնաւորում:

Պատասխան.- Յուղարկաւորութեան ծէրը հայոց մէջ վաղուց է կարգաւորուել եւ սահմանուել: Այսօր, մոռանալով մշակուած ծէրը, հնարում ենք անիմաստ, անսկզբունք ու անկապ բաներ, որոնցում արտայայտելով մեր «գիտելիքները» հանդերձեալ աշխարհի նկատմամբ, ուղղակի անարգում ենք հանգուցեալի յիշատակը: Դեռեւս Աշտիշատի ժողովը (365 թ.) դատապարտել է նմանեցեալի վրայ «լաց ու կոծ անելը, անկարգ շարժումներով եւ ոճրագործութիւններով սուգ կատարելը»: Այսօր, թաղումների ժամանակ ենք ականատես ենք լինում «անկարգ շարժումների եւ ոճրագործութիւնների»: Անդրանկաց եկեղեցու ցնծութիւնը մեզ արգելում է հանգուցեալին սգալ հեթանոսական անյուսութեամբ, լաց ու կոծ բարձրացնելով, «զոր անմիտ կանայք բարբառեն ի ցոյց կեղծաւորութեան եւ զկռապաշտիցն զգործն գործեն ի վերայ քրիստոնէից» (Մանդակունի), քանի որ դա անարգանք ու թշնամանք է հանգուցեալի թէ՛ մարմնի, թէ՛ յիշատակի դէմ: Հնում այդպէս անողներին մերժում էր եկեղեցին եւ կարգ կատարող քահանային էլ պատժում:

«Յուղարկաւորութիւն» բառը կազմուած է գրաբար «յ+ուղի+արկանել» բառերից, որ նշանակում է ճանապարհ գցել, ճանապարհել: Այսինքն՝ քրիստոնէական ըմբռնումով նմանեցեալին ճանապարհ ենք դնում դէպի մի նոր կեանք ու ոչ թէ չգոյութիւն: Թաղման ծէսի ժամանակ քահանան ամեն պարագայում յարութեան յոյսով մխիթարում է սգաւորներին: Հողն օրհնելով՝ օգուն է գերեզման, քանի որ անիծումս հողում չի կարելի նմանեցեալին իջեցնել: Ահա մի հատուած ծէսի ժամանակ քահանայի աղօթքից. «Տէ՛ր, տուր նրանց զգաստութեան հոգի, մխիթարութեան հոգի եւ մխիթարիք վշտակի սրտերը եւ բժշկի տրտմութեան վերքերը: Որպէսզի քո փառաց հաստատուն յոյսով տրտմութեան սգից առողջացածները փառուրեն քեզ»: Հետաքրքիր է, որ թաղման կարգում բաւական տող են գրաւում սպրող մերձաւորներից ուղղուած մխիթարական խօսքերը, ամեն անգամ ցոյց տալով Աստուծոյ Թագաւորութեան յաւիտենական ճանապարհը եւ ներկայ կեանքում մեր անձնական ճանապարհների ուղղելը, փոխելը: «Այլ մահ արդարոյն ամենեւին իսկ ցնծութիւն է եւ ուրախութիւն լուսեղեն հաստատութեան մէջ», ուստի եւ նմանեցեալին յուղարկաւորում ենք այն ճանապարհով, որով բոլորս ենք գնալու: Եւ քանի որ հանգուցեալին ճանապարհ ենք դնում դէպի կեանք, ուստի յուղարկաւորութիւնն էլ պէտք է կատարուի սաղմոսներով, հոգեւոր երգերով եւ օրհնութիւններով: Հիմնականում այս սկզբունքներն են արտայայտուած թաղման կարգում, որ կատարում է Հայ եկեղեցին համաձայն Մաշտոցի (Հայ եկեղեցու արարողութիւնների ծիսագիրքը): Ըստ Մաշտոցի հայոց մէջ կայ

երեք տեսակ թաղման ծես՝ հոգեւորականների, մեծահասակ աշխարհականների եւ երեխաների:
Հայոց մէջ ընդունուած է յուղարկաւորութեան հետեւեալ կարգը:

Ա. Մարմինը լուանում են, որն արտայայտում է մտերիմների սէրը եւ յարգանքը ննջեցեալի նկատմամբ:
Բ. Մարմինը փաթաթում են սպիտակ պատանով, որը խարիրդանշում է անապականութեան զգեստը, այսինքն՝ -սկզբնական անմեղութիւնը, որ ունէր մարդը նախքան մեղք գործելը:

- աշխարհի ունայնութիւնը, որ թողնում ենք ամէն ինչ՝ հարստութիւն, գանձ, ունեցուածք եւ միայն պատանն ենք տանում մեզ հետ:
- ննջեցեալը թողնում է այս աշխարհը եւ հագնում իր բարի, լուսաւոր գործերը: «Մերկ եկաւ եւ մերկ պիտի դառնայ», - ասում է Յորը (Ա 21)

- Յիսուսի արեամբ լուացած, մեղքերից ազատուած եւ արդարացուած գնում ենք մեր Տիրոջ մօտ՝ համաձայն Իր խոստումի, որ մեզ երբեք որք չի թողնի (Յով. ԺԴ, 18): Յիսուսի այդ խոստումն իրական է թէ՛ ներկայում, թէ՛ ապագայում: Այսինքն՝ նա մեզ հետ է աշխարհում եւ մեզ հետ կլինի նաեւ հանդերձեալում: Մենակ լինելը մարդու համար կատարեալ դժոխք է թէ՛ այստեղ եւ թէ՛ հանդերձեալում:

Գ. Երկու մոմ են վառում՝ մէկը գլխի մօտ, միւսը՝ ոտքերի: Այս յիշեցնում է մեզ այն հրեշտակներին, որ նստած էին Յիսուսի գերեզմանում՝ մէկը գլխի կողմը, միւսը՝ ոտքերի (Յով. Ի, 12), եւ անտեսցին կանանց Յիսուսի յարութեան լուրը: Այսինքն՝ ննջեցեալին յուղարկաւորում ենք յարութեան երանելի յոյսով:

Դ. Խուռն են ծխում հանգուցեալի վրայ, այսինքն՝ հանգուցեալը կենդանի ու ընդունելի է Աստծու մօտ, ինչպէս անուշահոտ խուռն: Նրա անուշահոտ վարքն ու պայծառ հաւատն է ներկայացնում իրեն Աստծու առաջ:
Ե. Երեսն ուղղում են դէպի արեւելք: Առաքելական կանոնների համաձայն, աղօթք անելիս երեսը պետք է ուղղել դէպի արեւելք: Ննջեցեալին էլ թաղում են նոյն դիրքով՝ դէպի արեւելք, քանի որ այսուհետեւ նրան մնում է միայն սրբերի բարեխօսական աղօթքին միանալ:

Զ. Աւետարան եւ սաղմոսներ են կարդում: Այս անելը երկու նշանակութիւն ունի, նախ ննջեցեալի հանդէպ մեր յարգանքն ու երախտիքն է արտայայտում, որ նա տեղափոխուել է մի նոր, անելի լաւ բնակարան եւ երկրորդ՝ ապրող վշտակիր մերձակորներին էլ ցոյց է տալիս, որ միփթարուն միայն Աստծու խօսքով, քանի որ մարդկային ոչ մի խօսք եւ իմաստութիւն չի կարող որեւէ կերպ միփթարել սգաւորներին:
Է. Ամբիծք են ասում: Ամբիծքը կամ անբիծը, որ նշանակում է անարատութիւն, սկսում են թաղման նախորդող օրուայ երեկոյեան, երբ մայր է մտնում արեւը՝ ընթերցանութիւններով եւ հոգեւոր երգերով, ննջեցեալի հոգու հանգստեան համար: «Մարմինը եւ արիւնը երկինք չեն ժառանգելու եւ ապականութիւնը՝ անապականութիւն» (Ա Կորնթ. ԺԵ, 50): Ամբիծք ասելով հաստատում ենք, որ ննջեցեալը, հագնելով «անբիծ» զգեստ, ժառանգելու է Աստծու Թագաւորութիւնը:

Ը. Թաղման յաջորդ օրը, առաւօտեան կատարում են այգուց կամ այգելց, այգեհող (էգնահող) գնում են գերեզման եւ կարգ կատարում, ցոյց տալով անմոռանալի սէրը հանգուցեալի նկատմամբ: Այդ այցելութեամբ խոստանում են, որ նրա յիշատակը անմոռանալի է, եւ սերունդները անմոռաց պիտի պահեն այդ կապը: Յիսուսի մահուանից յետոյ էլ իւղաբեր կանայք գնացին գերեզման՝ խուռն ծխելու: «Երեկոյան լաց է գալիս, իսկ առաւօտեան ուրախութիւն» (Սաղմոս ԻԾ, 6), քանի որ «եղաւ երեկոյ» (լացը, տխրութիւնը) եւ «եղաւ առաւօտ» (ուրախութիւն, ցնծութիւն), - «օր առաջին»: Ննջեցեալը այս խաւար աշխարհից (երեկոյ) տեղափոխուեց լոյսի աշխարհ (առաւօտ): Այս կեանքը երկրորդանի քաղաք է, մէկով մտնում ենք, միւսով դուրս գալիս:

Թ. Եօթնօրեկց են կատարում:

Ժ. Քառասնից են կատարում:

ժԱ. Տարելից են կատարում: Տարին մէկ անգամ յիշում ենք՝

հոգեհանգիստ կատարելով, նշելով, որ քրիստոնեաների համար դա երկրորդ ծնունդն է: Տարելիցին ննջեցեալի մերձակորները հոգեհանգստի մատաղ են կազմակերպում աղքատների համար կամ որեւէ բարեգործութեամբ յիշում հանգուցեալին:

ԺԲ. Գերեզմանն են օրհնել տալիս՝ այն հաւատով, որ ընդհանրական յարութեան յոյսը ամօթով չի թողնի:

ԺԳ. Մեռելոց յիշատակի օրերին գնում են գերեզման. որպէս կանոն, հնում այդ օրերին յիշատակի համար բարեգործութիւն էին անում, կերակրելով աղքատներին, օգնելով կարիքաւորներին եւ այլն: Վերջապէս, ապրողների տրտմութիւնն ու սուզը միայն մարմնապէս բաժանելու կսկիծն է, այն էլ ժամանակաւոր, քանի որ մենք բոլորս էլ գնալու ենք այդ ճանապարհով եւ Յարութեան օրը միասին մտնելու ենք Աստծու Թագաւորութիւն: Մնացած սովորութիւնները, որ տեսնում ենք շատ յաճախ, անմիտ եւ անիմաստ բաներ են, ուղղակի անգիտութեան դրսեւորում: Այդպիսի սովորութիւններից է, օրինակ, հանգուցեալի ետեւից ծաղիկներ շաղ տալը: Չի կարելի այդպէս զարդարել հանգուցեալի գնալու «ճանապարհը», դրանով անելի անարգում ենք ննջեցեալին:

Հարց.- Մի՞թէ ճիշտ են վարում նրանք, ովքեր կերակուր են տանում գերեզման եւ այնտեղ օրի խմում:

Պատասխան.- Այդ, այսպէս կոչուած «ողորմաբաս» խմելը գերեզմանում եւ մասն էլ գերեզմանի վրայ թափելը, որպէս թէ ննջեցեալի «բաժին», անյարիր է քրիստոնեական վարքին ու կենցաղին: Փոխարէնը պետք է առանձին սեղան պատրաստել տանը եւ կերակրել մարդկանց, նախօրոք օրհնել տալով սեղանն ու կերակուրը:

Հարց.- Ի՞նչու են գնում գերեզման եօթներորդ եւ քառասներորդ օրը:

Պատասխան.- Հին Կտակարանում մեռելի վրայ սգում էին եօթ օր (Յմնդոց Ծ, 10), ուստի եւ սգաւորները եօթներորդ օրն էին գնում գերեզման եօթնօրեկց կարգ կատարելու: Համաձայն Տաթեւացու եօթնօրեկց կատարում ենք ըստ եօթը շնորհների եւ եօթը առաքինութիւնների: Այդ շնորհներն ու առաքինութիւններն են զարդարում մարդու կեանքի ճանապարհը մինչեւ գերեզման եւ գերեզմանից էլ մինչեւ յալիտենութիւն, ու ոչ թէ՛ ճանապարհին սփռուած ծաղիկներն ու թանկարժէք գերեզմանաքարերը:

Առաքելական ժամանակներից ընդունուած էր կատարել քառասնիցը կամ քառասունքը՝ հոգեհանգիստ կատարելով: Ինչպէս Յիսուս քառասներորդ օրը համբարձուեց ու նստեց Հօր Աջ կողմը, նոյնպէս էլ քառասնից կատարելով, աղօթում ենք, որ Տէրն ընդունի ննջեցեալին սրբոց օթեանի մէջ՝ Աջ կողմում:

Մաշտոցի համաձայն, եօթնօրեկցի եւ քառասունքի կատարման կարգը նոյնն է:

Հարց.- Ի՞նչ խորհուրդ ունի տապանաքարը:

Պատասխան.- Հայոց մէջ որպէս շիրմաքար ընդունուած է տապանաքար կամ խաչքար դնելը: Մնացած ձեւերի շիրմաքարերը, որ տարածուած են այսօր, կռապաշտութեան, հեթանոսութեան եւ աթէիզմի հետեւանք են: Այդ բոլորը մերժում է Հայ եկեղեցին: Ձանազան պատկերներ, արձաններ, դամբարաններ կառուցելը բացարձակ անգիտութեան արդիւնք է. հայոց թագաւորներն անգամ հանգչում էին համեստ տապանաքարերի տակ: Ըստ Տաթեւացու, տապանաքարը ցոյց է տալիս, որ - ինչպէս այդ քարը անպիտան է գործի համար, այնպէս էլ ննջեցեալը՝ աշխարհի:
- յարութիւնը լինելու է վէմի նման՝ անապական մարմնով ու ոչ թէ՛ աղանական հողածին մարմնով: